ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ

Հասարակական գիտություններ № 4, 1962 Общественные

Ս. Ա. Օտայան

ՁԻՆ ՈՒՐԱՐՏՈՒԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Տնտեսության մեջ անասունների օգտագործումը մարդկային խոշորագույն նվաճումներից մեկն է։ Ինչպես ցույց են տալիս հնագիտական տվյալները, Հայկական բարձրավանդակում, սկսած 4—3-րդ հազարամյակներից սկսվում է ձիերի, էշերի և ջորիների օգտագործումը՝ հակիրճ ծանրություններ փոխադրելու համար։ Ձիու նշանակությունը ուժեղացավ արոտավայրային անասնապահության զարգացման հետ զուգընթաց, երբ նա դարձավ հովիվների սնունդը և իրերը փոխադրելու ու լեռնային արոտավայրերը ձմեռանոցների հետ կապելու անհրաժեշտ փոխադրական միջոց։ Բեռնակիր կենդանիների նշանակությունը ավելի ևս բարձրացավ բնակավայրերի և քաղաքների զարգացման, նրանց միջև սկսվող ապրանքափոխանակության, ինչպես նաև պատերազմներում նրանց օգտագործման կապակցությամբ, երբ ձին լծվում էր մարտակառքերին և երբ սկսվեցին հեծյալ զինվորների խմբեր կազմակերպվել։

Հայկական բարձրավանդակում ձին հայտնի է խոր հնությունից։ Վայրի ձիու ոսկորների մնացորդներ երևան են եկել շատ վայրերում՝ Լենինականում, որտեղ նրանք թվագրվում են մենդել-ռիսյան ժամանակաշրջանով[1] և Նալբանդ կայարանում, որտեղ հայտնաբերվել է ձիու ատամ վյուրմյան նստվածքներում[2]։

Ձիու շատ ոսկորների մնացորդներ են հանդիպում էնեոլիթյան բնակավայրերում (Շենգավիթ, Էլար, Գառնի)[3]։ Շենգավիթում ընտանի ձիու ոսկորների հայտնաբերումը (Ս. Մեժլումյանի պարզաբանությամբ) ստիպում է ենթադրել, որ ձիու ընտանի դարձնելը (Eguus Caballus) էնեոլիթյան ժամանակից վաղ է սկսվել, այսինքն 4-րդ հազարամյակի վերջերում (մ. թ. ա.)։ Չորրորդ-երրորդ հազարամյակներում (մ. թ. ա.) ձին լայնորեն հայտնի է եղել նաև Հայկական բարձրավանդակի սահմանամերձ երկրներում։ Այսպես, գրավոր աղբյուրները հավաստում են ջորու գոյությունը Մարի քաղաքում (3-րդ հազարամյակ)։ Արդեն մինչ 2-րդ հազարամյակը (մ. թ. ա.) տնտեսության մեջ ձին մեծ դեր էր կատարում Միջագետքում։ Միաժամանակ ձին դառնում է ապրանքափոխանակման միջոց հարևան երկրների հետ[4]։ Միջագետքում ձիաբուծությունը ուժեղ զարգանում է կասիտյան ժամանակ։ Ձին կարևոր դեր

---

[1] Л. А. Авакян, Четвертичные ископаемые млекопитающие Армении, Ереван, 1959, стр. 53.

[2] Л. А. Авакян, ук. соч., стр. 8, С. Сардарян, Палеолит Армении, Ереван, 1954, стр. 37.

[3] Е. Байбуртян, Псевдонеолитические поселения Армении, Проблемы истории материальной культуры, 1933, № 2, стр. 40, Б. Н. Аракелян, Гарни I, 1951, стр. 26, газета «Коммунист» от 15. X. 1959 г., № 244.

[4] И. М. Дьяконов, Законы Вавилонии, Ассирии и Хеттского царства. ВДИ, 1954, № 4, стр. 278 и последующие.

է կատարել հյուրասոնների մոտ, որոնք ձին լծելով մարտակառքին՝ ռազմական գործի մեջ կարևոր նորություն մտցրին[5]։ Ձիուն լավ ծանոթ էին նաև Փոքր Ասիայի կենտրոնական մասում, որ հաստատվում է հեթիթական օրենքների ժողովածուի մեջ բերված փաստերով։ Հեթիթական գրավոր հուշարձաններում ձին առաջին անգամ հիշատակվում է Անիտտա թագավորի (մ. թ. ա. 19-րդ դար) արձանագրություններից մեկում։ Այսպիսով, հնարավորություն ենք ստանում Հայկական բարձրավանդակը ձիարուծության հնագույն կենտրոններից մեկը համարելու։ Դրա հետ միասին մեզ հնացած է թվում մի շարք հետազոտողների այն տեսակետը, որոնք պնդում են, թե ձին Առաջավոր Ասիա է մուտք գործել Միջին Ասիայից։ Բոլոր հայտնի փաստերը վկայում են, որ Հայկական բարձրավանդակում ձին գոյություն է ունեցել հնագույն ժամանակներից և արդեն 4-րդ դարում (մ. թ. ա.) ընտելացված է եղել։

Ամենայն հավանականությամբ ձին սկզբից օգտագործվել է որպես կաթնատու և մսատու, ինչպես նաև որպես բեռնակիր կենդանի։ Սակայն մենք տեսնում ենք, որ արդեն 2-րդ հազարամյակի (մ. թ. ա.) կեսերին Հայկական բարձրավանդակում ձին օգտագործվում է ոչ միայն որպես հեծնելու և բեռներ փոխադրելու, այլև մարտակառքին լծելու համար։ Այսպիսով, 1338 թ. (մ. թ. ա.) Հայասայի և հեթիթների թագավորների միջև եղած պատերազմի ժամանակ Հայասայի թագավորի զորքի մեջ կային 700 հեծյալներ (՞) (կառավարներ)[7]։ Մի այլ հեթիթական բնագրում ասվում է, որ Մուրշիլ թագավորը հաղթանակ տանելով Հայասների դեմ մղված պատերազմում, պայման է դնում իրեն հեծյալ (կառավարներ) տրամադրելու[8]։ Հայկական բարձրավանդակում երկրորդ հազարամյակում (մ. թ. ա.) ձիու լայն օգտագործման մասին է վկայում նաև ձիերի զանգերի, սանձերի փայտյա մարտակառքերի հայտնաբերումը։ Լճաշենի 13—12-րդ դարերի (մ. թ. ա.) կուրգաններից հայտնաբերվել են զույգ ձիեր լծած մարտակառքերի բրոնզյա մոդելներ։ Լճաշենից հայտնաբերված ոսկորների մնացորդների անալիզը ցույց է տալիս, որ երկու ձիու զանգ վերաբերվում է Eguus Caballus տեսակի հետևյալ տիպին. ա) լայնագունչ, ճակատի լայնությունը 237 և ճակատա-հիմնային ցուցանիշով 47,1 մմ, բ) երկարագունչ աչքերի խոռոչների ինդեքսը 190 մմ-ից ավելի է, գ) ատամնաշարքի ինդեքսը հավասար է 33,8 մմ։ Ձիու նկարագիրը միկրոդոնտային է, իսկ ատամները՝ միջին շերտավորությամբ վերաբերվում են պարալոիդ տիպին[9]։

Հայկական բարձրավանդակում ձիարուծության զարգացման կապակցությամբ հարկավոր է հիշատակել նաև ձիու կմախքի հայտնաբերումը Շահթախթի գյուղում (Նախիջևանի ԱՍՍՌ)[10]։ Հայկական բարձրավանդակում ձին որպես հեծնելու կենդանի օգտագործելու ժամանակը որոշելու համար շատ հետաքրքրական է Ե. Լալայանի կողմից Քյուլ-Թափայում (Նախիջևանի ԱՍՍՌ)

---

5 В. В. Струве, История древнего Востока, 1941, стр. 38.

6 И. М. Дьяконов, там же.

7 Г. Р. Капанцян, Хаяса — колыбель армян, Ереван, 1947, стр. 21.

8 Г. Р. Капанцян, ук. соч., стр. 33.

9 Ս. Մեջլումյանի բնորոշումը։

10 А. Алекперов, Крашеная керамика Нахичеванского края и Ванское царство, СА, 1937, № 4, стр. 197.

հայտնաբերված թամբած ձիու սխեմատիկ քանդակը (՞)։ Յու Լիպսը այս քանդակը վերագրում է 3-րդ հազարամյակի կեսերին (մ. թ. ա.)։ Ռ. Բունիաթովը այդ պատկերը կապելով Ադրբեջանում անասնապահության զարգացման հետ, չի համաձայնվում Լիպսի թվագրությանը, գտնելով այն չափազանց բարձրացված, պատճառաբանելով, որ Ադրբեջանում այդպիսի համանմանություն չկա[12]։ Հիշյալ քանդակը քննարկելով Հայկական բարձրավանդակում ձիաբուծության զարգացման ընդհանուր պրոցեսի կապակցությամբ, մեզ ընդունելի է թվում Լիպսի թվագրությունը, սակայն նշելով այն ոչ թե 3-րդ հազարամյակի (մ. թ. ա.) կեսերին, այլ վերջերին։ Երկրորդ հազարամյակի սկզբներին Հայկական բարձրավանդակը դառնում է և հետագայում էլ մնում է ձիաբուծության զարգացման կենտրոններից մեկը Առաջավոր Ասիայում։ Ձիաբուծության հետագա զարգացումը Հայկական բարձրավանդակում և մերձակա շրջաններում տեղաշրջում մտցրեց ռազմական տեխնիկայի և որոշ չափով տրանսպորտի մեջ, առաջին պլանի վրա քաշելով հեթիթական և Միտանիի տերություններին[13]։ Նման հիմնավորման լավագույն ապացույց է մեծաքանակ ռազմակառքերի առկայության փաստը հեթիթների մոտ։

Այսպես, 1312 թ. (մ. թ. ա.) եգիպտացիների հետ ունեցած ճակատամարտում հեթիթներն ունեին 3500 մարտակառք[14]։ Անկասկած այդ թվի մեջ են մտել նաև դաշնակից և նվաճված երկրների, այդ թվում Հայկական բարձրավանդակում ապրող ցեղերի մարտակառքերը։ Ձիաբուծության հետագա զարգացումը Հայկական բարձրավանդակում այդտեղ ապրող ցեղերին հնարավորություն տվեց ձիեր մատակարարել ոչ միայն հիշյալ տերիտորիայում կազմակերպված ցեղային միավորումներին, այլև մի շարք հարևան երկրներին[15]։ Սկզբում ձին բեռնակիր անասուն էր, իսկ մարտակառքերի առաջ գալուց հետո նա օգտագործվում էր նաև որպես քաշող ուժ։ Այլ կենդանիների ընտելացման հետ զուգընթաց ձիու օգտագործումը որպես բեռնակիր կենդանու դադարում է կարևոր տնտեսական նշանակություն ունենալուց, որովհետև հիմնական բեռները փոխադրվում են քաշվող տրանսպորտով, իսկ որպես բեռնակիր անասուններ հիմնականում օգտագործվում էին էշերը, ջորիները, եզները, ուղտերը և այլն։ Երկրորդ հազարամյակի վերջերից ձիու նշանակությունն ուժեղանում է նոր տիպի զորքի՝ հեծելազորի երևան գալով, որի մասին են վկայում կտրված ծայրերով սրերը, որոնք հիմնականում օգտագործվում էին հեծելազորի կողմից։ Սնպաձև արձանագրությունները հավաստում են հեծելազորի գոյությունը նաև Ուրարտուում, այն կարևոր դեր է խաղացել ռազմական խնդիրների լուծման գործում և հետագայում մարտակառքերի նկատմամբ գերակշռող դեր է կատարել։ Այսպիսով ձիաբուծությունն Ուրարտուում գնալով ավելի է զարգանում, ըստ որում երկրի որոշ մարզեր հռչակված էին զարգացած անասնապահությամբ։ Իր 8-րդ արշավանքի (714 թ. մ. թ. ա.) նկարագրության մեջ ասուրական թագավոր Սարգոն II Ուրմիա լճի արևելյան

---

11 Ю. Липс, Происхождение вещей, М., 1951, стр. 197.

12 Т. Бунятов, Земледелие и скотоводство в Азербайджане в эпоху бронзы, Баку, 1957, стр. 98.

13 «Всемирная история», т. I, стр. 316.

14 «Всемирная история», т. I, стр. 357.

15 Б. Б. Пиотровский, Н. Д. Флитнер, Очерки по истории Древнего Востока, стр. 38; Б. Б. Пиотровский, История и культура Урарту, стр. 206.

ափի մասին գրում է. Սուբիի մարզում, որը ուրարտացիք անվանում են Մանի-ացիների երկիր, ամբողջ թագավորությունից որպես տուրք հավաքված մրտ-ուկները վարժեցվում են շրջադարձերի, պտույտների և այն բոլորին, ինչ հարկավոր է մարտի համար (АВИИУ, 167)[16]։ Վերև հիշված բնագրից երևում է, որ Ուրարտուում ձիերը հատկապես ջոկվում էին հեծելազորի համար և նրանց սովորեցնում էին ռազմական շարքի և գործողությունների (շրջադարձերի, ելուստների, պտույտների և այլն), որից պետք է եզրակացնել, որ հեծելակ-ները ևս հիշյալ շարժումները գիտեին։

Ուրարտական հեծելակների բարձր վարպետության մասին վկայում է Սիկգեղի (Վան) սեպագիրը, ուրարտական Մենուա թագավորը Արցիբինի (որը նշանակում է արծիվ) ձիու վրա 22 կանգուն, այսինքն 11 մետրից ավելի, թռիչք է գործել, որը մոտ է Ջանդլերի կողմից սահմանված արդի համաշխար-հային ռեկորդին։ Հետաքրքիր է նշել, որ հիշյալ վայրը հետագայում ևս մնաց որպես հայ իշխանների ձիարշավարան, իսկ մինչև առաջին համաշխարհային պատերազմը ամեն գարնան սկզբին այնտեղ ժողովրդական ձիարշավներ էին տեղի ունենում[17]։ Ուրարտական և ասորական աղբյուրները վկայում են, որ երկրի շատ շրջաններում զարգացած էր ձիաբուծությունը և տվյալներ են բե-րում գրավված ձիերի քանակի մասին։ Միայն ուրարտական Արգիշտի I և Սարդուրի II թագավորների օրոք գրավվել են մոտ 25—30 հազար ձի[18], ընդ որում բացի դրանցից ուրարտացիները գրաված երկրների վրա հարկեր էին դնում, որոնց մեջ մտնում էին նաև ձիեր։ Այսպես, Դիաուխի երկրի կողմից տրվող ամենամյա հարկերի ցուցակի մեջ հիշատակված են նաև 300 հեծնելու ձիեր[19]։

Թե որ շրջանից են հիշյալ ձիերը գրավվել, ստույգ կերպով պարզել հնա-րավոր չէ, սակայն բնագրերի համեմատությունից հնարավոր է որոշ եզրակա-ցություններ անել։ Խորխորյան տարեգրության մեջ ձիեր հիշատակվում են հիշյալ երկրների հետ միասին։

1. Արդիշտիի թագավորության երկրորդ տարվա (՞) երկրորդ արշավանքի ժամանակ՝ 785 թ. (՞) մ. թ. ա. գրավվում են Դիաուխի, Շերիազի, Թարիունի, Զաբախա, Իգանի, Էրիախի, Ապունի, Ուիտերուխի երկրները, որտեղ այլ ավա-րի հետ միասին գրավվել են 1104 ձիեր (УКН—127, I)։ Այս երկրները գտ-նվում են Տայքի շրջանում, Քուռ գետի ակունքներում, Զրլդր լճից հարավ-արևմուտք, Շիրակում և Արաքս գետի վերին հոսանքում։ Հիշյալ տարում գրավվել են և այլ երկրներ ու հավանական է, որ ձիերի մի մասը գրավվել են այդ երկրներից։

---

16 И. М. Дьяконов. Ассиро-Вавилонские источники истории Урарту (АВИИУ). ВДИ, 1952, № 2, 3.

17 Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи (УКН), 110, Б. Б. Пиотровский, Кармир-блур, III, стр. 46, И. М. Дьяконов, Заметки по урартской эпиграфике. Эпиграфика Востока,1951, № 4, стр. 115—116, С. Г. Бархударян, Урартское происхождение нахарарского рода Арцруни, исследования по истории культуры народов Востока, М.—Л., 1960, стр. 37.

18 Անհրաժեշտ է նշել, որ շատ բնագրերում միավորների թիվը (նույնիսկ հազարի) չեն պահպանվել, որը խոսում է, այն մասին, որ հափշտակված ձիերի թիվը եղել է շատ ավելի։

19 Н. В. Арутюнян, Заметки по урартской эпиграфике, Изв. АН Арм. ССР, 1957 г., № 12, стр. 66—68.

2. Իր թագավորության հինգերորդ (՞) տարվա (782 թ. մ. թ. ա.) երկրորդ արշավանքի ժամանակ Արգիշտին գրավել է Ուրուրդա, Ուիշուինի, Խախիա երկրները (իսկ առաջին արշավանքի ժամանակ Կիեխունի քաղաքի երկիրը), որտեղ գրավել է 232 ձի (УКН, 127, 2-րդ)։ Հիշյալ շրջանները տեղադրվում են հետևյալ կերպ. Խախիա-Խուշանին գտնվում է Տայքից դեպի հարավ-արևմուտք (Դիաուխին), Կիեխունին՝ Սևան լճի շրջանում։

3. Արգիշտիի թագավորության 7-րդ (՞) տարվա երկրորդ արշավանքի միջոցին 780 (՞) թ. (մ. թ. ա.) ուրարտացիները գրավել են Արխի, Բուշտու Մանա (՞) և երկու այլ երկրներ (բնագրի վնասվածության պատճառով այդ երկրների անունները չեն պահպանվել), որտեղ գրավել են 606 ձի (УКН, 127, III)։ Հիշյալ երկրները գտնվում են Ուրմիայի լճամերձ շրջանում։

4. Արգիշտիի 8-րդ (՞) տարվա թագավորության (779 թ. մ. թ. ա.) վերնագրային դեկլարացիայում հիշատակվում են Իգանի, Մանա և Բուշտու երկրները։ Այդ տարվա առաջին արշավանքում ասված է Իյանի երկրի և նրա երկու քաղաքների՝ Էրատելի և մյուս Էրատելի քաղաքների գրավման մասին։ Նույն տարվա երկրորդ արշավանքում հիշատակվում են Մանա և Քուշտու երկրները։ Հիշյալ երկրներում գրավված են ավելի քան 790 ձի (УКН, 127, III)։ Հիշված երկրները գտնվում են Ուրմիա և Զլդրը լճերի շրջաններում։

5. Արգիշտիի թագավորության (778 թ. մ. թ. ա.) (՞) իններորդ տարում (։) (778 թ. մ. թ. ա.) մեկ արշավ կատարվեց դեպի Մանայի և Իրկիունի աշխարհները, որտեղ գրավվեց 286 ձի (УКН, 127, IV)։

6. Արգիշտիի թագավորության տասներորդ տարում (777 թ. մ. թ. ա.) Մանա երկիրը հիշատակվում է միայն վերնագրային դեկլարացիայում, իսկ արշավանքի բնագրում հիշատակվում են Քուշտու, Աշկայա-Հովիտ, Շատիրագանի Ուգիշտինի երկրները, որտեղ գրավվել են 290 ձիեր (УКН, 127, IV)։ Տվյալ երկրները գտնվում են Ուրմիայի լճամերձ շրջանում։

7. Արգիշտիի թագավորության տասնմեկերորդ տարվա (՞) (776 թ. մ. թ. ա.) (՞) երկրորդ արշավանքում հիշատակվում է Մանա երկիրը, որտեղ գրավվել են 170 ձի (УКН, 127, IV—V)։

8. Արգիշտիի թագավորության տասներկուերորդ տարում (՞) (775 թ. մ. թ. ա.) նույնպես մեկ արշավանք է կազմակերպվել դեպի Մանա և Բուշտու երկրները, որտեղ գրավվել են 308 ձի (УКН, 127, V)։

9. Արգիշտիի թագավորության տասներեքերորդ տարում (774 թ. մ. թ. ա.) նվաճվել են Մանա, Էտիունի, Էրիախի, Կատարզա, Ուտերուխի երկրները և գրավվել են 1200 ձի (УКН, 127, V)։ Տվյալ երկրները գտնվում են Ուրմիայի լճամերձ շրջան Շիրակում և Վանանդում։

Այսպիսով, ըստ Արգիշտի I Խորխորյան տարեգրության, ուրարտացիները ձիեր են գրավել հիշյալ շրջաններում։

Հյուսիսային մարզերում, Տայքի, Վանանդի շրջաններում, Արաքս գետի վերին հոսանքներում և Սևանի ավազանում 1336 ձի։

Ուրմիայի լճամերձ շրջաններում՝ 768 ձի։ Մյուս ձիերի գրավման վայրերը բնագրերով չեն ճշտվում։

Սուրբ Սոխակի սեպագիր արձանագրությունը հիմնականում կրկնում է Արգիշտիի Խորխորյան տարեգրության մեջ հիշատակված շրջանները, սակայն այս արձանագրության մեջ հյուսիսային շրջաններում գրավված ձիերի քա-

նակը հասնում է մինչև 4426, իսկ Ուրմիայի շրջանից գրավվածների քանակը 600 (УКН, 128, А и Б)։

Սարդուրի տարեգրությունը նույնպես խոսում է նվաճած երկրներից մեծաքանակ ձիեր գրավելու մասին։ Ձիեր գրավելու առթիվ հիշատակված երկրները բերվում են հետևյալ կարգով.

1. Մանա, Բաբիլու, Քարուադա, որտեղ գրավված են 2500 ձի (УКН, 155, А)։ Այս երկրները ընկնում են Ուրմիա լճից դեպի հարավ, մինչև Տիգրիսի վտակ Դիալա գետի վերին հոսանքները։

2. Մանա-Էրիախի՝ 412 ձի. Ուրմիայի լճամերձ շրջան, Շիրակ։

3. Կուլխա, Խուշանի, Աբիլանի՝ 65 ձի (УКН, 155, С). Սև ծովի հարավ-արևելյան շրջան, Արաքսի վերին հոսանք։

4. Էրիախի, Աբիլիանի՝ 500 ձի (УКН, 125, С). Շիրակ, Արաքս գետի վերին հոսանք։

5. Կուլխա, Ուիտերուխի 1500 ձի (УКН, 125). Սև ծովի հարավ-արևելյան ափեր, Արաքս գետի վերին հոսանք։

6. Կուլուանի, Էրիախի՝ 1613 ձի. Մանայի շրջան (?)՝ Ուրմիա լիճ, Շիրակ։

7. Ուզունիա, Էրիախի, Իրտելուանի, Կադիանի, Արունի, Աբուլիանե. Ուելիկունի, Արկուկինի, Ադախունդ, Լուիպրունի, Էշումուա, Կամնիու, Կուալբանի, Ուխունի, Տերիանի՝ 3500 ձի (УКН, 155). Շիրակ, Արաքս գետի վերին հոսանք, Սևանի մերձլճյան շրջան և այլն։

Այսպիսով, Սարդուի, ինչպես և Արգիշտիի տարեգրություններում հիմնականում հիշատակվում են Ուրմիայի լճամերձ շրջանը, Տայքը, Սևանը, Շիրակը և Արաքս գետի վերին հոսանքները։ Երկու տարեգրությունն էլ հիմք են տալիս պնդելու, որ հիշյալ շրջանները ունեցել են շատ զարգացած անասնաբուծություն և ձիաբուծություն։ Նվաճվելուց հետո հիշյալ երկրները մտնում էին (երբեմն ժամանակավորապես) Ուրարտուի մեջ և նրանք հարկադրվում էին այդ թվում նաև ձիերով, որը երևում է Դիաուխի երկրի մասին վերևում բերված օրինակից։ Անհրաժեշտ է նշել, որ ավելի վաղ գրված արձանագրությունները ևս նշում են հիշյալ երկրներից ձիեր գրավելու մասին (УКН, 20, 38, 24)։ Ձիեր հիշատակվում են նաև Թեյշեբաինիի (Կարմիր բլուր) պեղումների ժամանակ հայտնաբերված սեպագիր աղյուսակներում։ Այսպես, ձի հիշատակվում է 1949 թ.[20] հայտնաբերված աղյուսակի բնագրում։ Ուրարտական բնագրերում հիմնականում հիշատակվում են նվաճված երկրներից գրավված ձիերի մասին, սակայն ներքին մարզերի մասին այդ բնագրերը ոչինչ չեն ասում[21]։

Այդ մարզերի մասին բազմաթիվ տվյալներ են բերում ասորական աղբյուրները, որոնք հիշատակում են Հայկական բարձրավանդակի շատ շրջաններ, որտեղ Նաիրի-Ուրարտու ժամանակաշրջանում զարգացած ձիաբուծություն կար։ Սակայն նշված աղբյուրները հիշատակում են նաև մի շարք շրջաններ, որոնք Հայկական բարձրավանդակի մեջ չէին մտնում, բայց հնթակա էին Նաիրի-Ուրարտուին, որոնք մենք հարկ ենք համարում թվարկել։ Այսպիսով, ասորական աղբյուրներում հիշատակվում են հետևյալ շրջանները, որոնք մտնում էին Նաիրի-Ուրարտուի կազմի մեջ՝ հարավ-արևելքից դեպի հյուսիս-արևմուտք ուղղությամբ։

---

20 Б. Б. Пиотровский, Раскопки Кармир-блура, III, стр. 75—76.

21 Раскопки Б. Б. Пиотровского Материал не опубликован.

1. Տումմե՝ Մեծ և Փոքր Զաբ Դիալա գետերի վերին հոսանքներում, որտ հիշատակվում է Թիգլատպալասար I կողմից ձիեր գրավելու կապակցությամբ (АВИИУ, II), Աշուրնասիրպալ II կողմից՝ ձիերով տուրք ստանալու կապակցությամբ (АВИИУ, 23, 1, 5, 4)։ Ձիեր հիշատակվում են նաև Դիալա գետի վերին հոսանքներում գտնվող ուրիշ երկրներում։ Այսպես՝ Շամշի-Ադադ V հիշատակում է Դիալա գետի և Ուրմիա լճի միջև բնակվող ցեղերից լծելու ձիեր գրավելու մասին (АВИИУ, 34, 3-րդ արշավանք)։

2. Տիգրիս գետի վերին հոսանքներում գտնվող Նիրբու շրջանը երկու անգամ հիշատակվում է Աշուրնասիրպալի կողմից, այդ շրջանից հարկեր, այդ թվում ձիեր հավաքելու կապակցությամբ ((АВИИУ, 23, II—2)։

3. Տիգրիսի վերին հոսանքներում գտնվող Նիրգուն մարզը հիշատակվում է Աշուրնասիրպալ II կողմից, տուրք, այդ թվում ձիեր ստանալու կապակցությամբ (АВИИУ, 26, էջ 25)։

4. Մուկանիա, որը գտնվում է Ջուդի-դաշ լեռան հյուսիսային կողմը Շերնաք-Դաղի շրջանում, հիշատակվում է Թիգլատպալասար III կողմից, այդ շրջանից ձիեր գրավելու կապակցությամբ (АВИИУ, 41, 176)։

5. Նիբուր լեռը, որը գտնվում է Վանա լճի հարավային ափին, հիշատակվում է Թիգլատպալասար III կողմից ձիեր գրավելու կապակցությամբ (АВИИУ, 41, 176)։

6. Բիտ-Բուրիտիշ, որը գտնվում է Փոքր ասիական Տավրոսի լեռներում, հիշատակվում է Սարգոն II կողմից 100 մարտակառք գրավելու կապակցությամբ, որը հնարավորություն է տալիս ենթադրելու լծկան ձիերի առկայության մասին (АВИИУ, 46, 165)։

7. Մանեացիների երկիր, որը գտնվում է Ուրմիա լճից դեպի հարավ-արևելք, հիշատակվում է Շամշի-Ադադ V կողմից, այստեղից լծկան ձիեր ստանալու կապակցությամբ (АВИИУ, 34, 3-րդ արշավանք)։ Երեք անգամ հիշատակվում է Սարգոն II կողմից ձիեր գրավելու և հեծյալ ու լծկան ձիերով տուրք ստանալու կապակցությամբ (АВИИУ, 49 (6, 51, 46) 165)։ Երեք անգամ հիշատակվում է Աշուրբանապալի կողմից՝ ձիեր գրավելու կապակցությամբ (АВИИУ, 72, 2-րդ, 95—3, 26, 73—3-րդ, 16—4-րդ, 14)։ Անհրաժեշտ է նշել, որ ասորական աղբյուրներում հիշատակվում են երկրներ, որոնք գտնվում են Մանիացիներ երկրի և Ասորեստանի միջև (АВИИУ, 46, 165)։

8. Գիլզան, որը գտնվում է Ուրմիա լճից դեպի արևմուտք, հիշատակվում է Թուկուլթի-Նինուրթի II կողմից՝ 2720 ձի գրավելու կապակցությամբ (АВИИУ, 22)։ Երկու անգամ հիշատակվում է Աշուրնասիրպալ II կողմից՝ ձիով տուրք ստանալու կապակցությամբ (АВИИУ, 23, 2-րդ—80)։ Չորս անգամ հիշատակվում է Սալմանասար III կողմից՝ լծված ձիերով տուրք հավաքելու կապակցությամբ (АВИИУ, 27 (1, 27) 2-րդ, 60, 28, 174)։

9. Խարխի, որը տարածվում է Վանա լճից դեպի հարավ-արևելք։ Հիշատակվում է Թիգլաթպալասար I և Ադադնիրար II կողմից՝ ձիով տուրք հավաքելու կապակցությամբ (АВИИУ, 12 և 21)։

10. Խուրուշկիա՝ տարածվում է Վանա լճից դեպի հարավ, Քոխտան գետի հովտում։ Երկու անգամ հիշատակվում է Աշուրնասիրպալ II կողմից՝ ձիերով տուրք հավաքելու կապակցությամբ (АВИИУ, 23 (1, 56 և 23) 2-րդ 80), Սալմանասար III (АВИИУ, 27, 3-րդ, 63), Շամշի-Ադադ V (АВИИУ, 34, 3-րդ արշավանք) և երեք անգամ հիշատակվում է Սարգոն II կողմից՝ ձիերով

հարկ հավաքելու կապակցությամբ (АВИИУ, 46 (121, 49, 306 և 54) 28)։ Հիշյալ արձանագրություններում հանդիպում են ձիեր և լծկան ձիեր տերմինները։

11. Խիմուան և Պոիտիրին գտնվում են Խաբխի մոտ, Վան և Ուրմիա լճերի միջև և հիշատակվում են Թիգլատպալասար I կողմից՝ ձիերով տուրք ստանալու կապակցությամբ (АВИИУ, 12)։

12. Քիտ-Զամանին տարածվում է Արածանի գետի միջին հոսանքում և երկու անգամ հիշատակվում է Աշուրնասիրպալ II կողմից՝ որպես տուրք մարտակառքեր, լծկան և հեծնելու ձիեր ստանալու կապակցությամբ (АВИИУ, 23, (2-րդ 2) և 26 (№ 36)։

13. Շուպրիան տարածվում է Արածանի գետի միջին հոսանքում և հիշատակվում է Աշուրնասիրպալ II կողմից՝ որպես տուրք մարտակառքեր և ձիեր ստանալու կապակցությամբ (АВИИУ, 23/II, 2)։

14. Արտաշկուն ընկած է Վանա լճից (՞) դեպի հյուսիս-արևելք և հիշատակվում է Սալմանասար III կողմից ուրարտական Արամ թագավորից մարտակառքեր, հեծելակներ և ձիեր գրավելու կապակցությամբ (АВИИУ, 27/II, 45)։

15. Զանզիունան ընկած է Վանա լճի արևելյան ափում, Արմարիլիի մոտ և հիշատակվում է Սալմանասար III կողմից՝ լծկան ձիեր ստանալու կապակցությամբ (АВИИУ, 27/II, 54)։

16. Արևելյան Կապադովկիայի շրջանը, որը երեք անգամ հիշատակվում է Սալմանասար II կողմից՝ մարտակառքեր, ձիեր և ջորիներ ստանալու կապակցությամբ (АВИИУ, 54 (28, 72) 2-րդ, 68—80)։

17. Ուլխուն, որը ընկած է այժմյան Մարանդի (՞) մոտ, հիշատակվում է Սարգոն II կողմից այն կապակցությամբ, որ Ռուսա I այդ երկրի խոպան հողերը դարձրել է հրաշալի մարգագետիններ և արոտավայրեր և իր ձիերի համար փարախներ կազմակերպել (АВИИУ, 49 (199))։

18. Հայկական Տավրոսը հիշատակվում է Թիգլաթպալասար III կողմից ձիեր գրավելու կապակցությամբ (АВИИУ, 41 (176))։

19. Դայաէնի (ուր. Դիաուխի), որ գտնվում է Տայքի շրջանում, հիշատակվում է Թիգլաթպալասար I կողմից, այն տեղեկության համաձայն, որ Նաիրի երկրի Տումմից մինչև Դալաէնի նվաճվել է և որպես տուրք լծկան ձիեր են վերցված (АВИИУ, 4-րդ, 43)։

Այս ամենը հիմք են տալիս պնդելու, որ Ուրարտուում ձիաբուծությունը զարգացած է եղել, որը և Հին արևելքի այդ մեծ պետությանը հնարավորություն է տվել պահելու հզոր և իր ժամանակի համար առաջնակարգ հեծելազոր, ուր հավաքվել են ընտրովի ձիեր, իսկ խոտանվածները ուղարկվել են գումակ և օգտագործվել տնտեսական կարիքների համար։ Սովորաբար տրնտեսական աշխատանքներում ծանր բեռներ փոխադրելու համար օգտագործվում էին եզները, որովհետև զույգ ձիերի ձգողական ուժը, չհաշված սայլի քաշը, 300 կգ ավելի չէր[22]։ Այսպիսով, ձիերը տնտեսական աշխատանքներում սակավ պիտանի լինելով, օգտագործվում էին ռազմական նպատակների համար որպես մարտակառքերի և գումակի քաշող ուժ, իսկ անհրաժեշտության դեպքում օգտագործվում էին որպես բեռնակիր կենդանիներ։

---

22 В. О. Витт, Лошади пазырыкских курганов СА XIV, 1958, стр. 192.

Հնագիտական նյութը թույլ է տալիս դատել ուրարտական ձիու հատկությունների մասին։ Կարմիր բլուրում հայտնաբերված ձիերի ոսկորների մնացորդների ուսումնասիրությունը հաստատում է Ուրարտուում երկու տիպի՝ ոչ մեծ լեռնային, նեղ բաժակաձև սմբակով, զանգվածային ստորին ծնոտով ձիերի և հարթավայրի ձիերի գոյությունը[23]։ Ըստ Ս. Կ. Դալի, ուրարտական ձիու հետնաբաշի բարձրությունը հավասար է 125,5 սմ, ունի համեմատաբար փոքր գլուխ 12,8 սմ լայնությամբ, փոքրիկ, լայնորեն դրված և փոքր ինչ կախված ականջներով։ Աչքերը փոքր են և խիստ կերպով դեպի առաջ հառած։ Ոտքերը բարակ են ու թեթև և ըստ իրենց ձևի վերաբերում են արևելյան տիպին ու ավելի մոտ են այժմյան արաբական ձիուն։ Հետաքրքիր է նշել, որ քաղաքի սահմաններում գտնված ձին տարբերվում է միջնաբերդում գտնված ձիուց։ Կենդանաբան Ս. Կ. Դալի կողմից տրված բնութագիրը հաստատվում է ձիու գլխի հիանալի բրոնզե արձանիկով, որը Բ. Բ. Պիոտրովսկու կարծիքով զարդարել է մարտակառքի առեղը[24]։ Ուրարտուի ձիաբուծությանն է վերաբերում 1957 թ. Կարմիր բլուրում գտնված ձի մաքրելու խոզանակը, որը իրենից ներկայացնում է ձվաձև տախտակ բազմաթիվ անցքերով, որոնցից յուրաքանչյուրի մեջ եղել են խոզի 10-ական մազ[25]։

Բանակի տակտիկական խնդիրների լուծման գործում ուրարտական հեծելազորը խոշոր և հաճախ տվյալ արշավանքում գլխավոր դեր է կատարել։ Այսպես, դեպի Ուրմիա լճի հարավային ափերն ուղղված ուրարտական բանակի արշավանքներից մեկին մասնակցել են 106 մարտակառք, 9174 հեծելակ, 2704 հետևակ։ Դեպի Անդրկովկաս ուղղված մի ուրիշ արշավանքի մասնակցել են 65 մարտակառք, 15760 հետևակ և 1000 հեծելակ (УКН, 22, 24)։ Ինչպես երևում է առաջին օրինակից, տվյալ արշավանքում հեծելազորը բացարձակապես գերակշռել է հետևակին և միանգամայն պարզ է, որ այդ արշավանքի հիմնական խնդիրները դրված են եղել հեծելազորի վրա։ Հետևակին մնում էր միայն թշնամուն դուրս վռնդել հեծելազորի համար անառիկ վայրից և ապա պահպանել ձեռք բերված հաջողությունները։ Եթե առաջին՝ հարավային արշավանքում հիմնական խնդիրը իրագործում էր հեծելազորը, ապա հյուսիսային արշավանքում այդ խնդիրը պետք է կատարեր հետևակը։ Տվյալ դեպքում հեծելազորի վրա դրված էին միայն հետախուզական և ռազմական պահպանության խնդիրները, ինչպես և ջախջախված թշնամուն հետապնդելը։ Այդ կապակցությամբ պետք է ասել, որ ուրարտական հեծելազորը բանակի հետ միասին կատարում էր (երբեմն 2—3 ամիս տևողությամբ) հարյուրավոր, նույնիսկ հազարավոր կիլոմետրանոց արշավանքներ։ Ընդունելով, որ հիշյալ ժամանակի կեսը օգտագործվում էր արշավանքի նպատակները՝ իրագործելու համար, միանգամայն պարզ է, որ բանակի արշավանքին տրամադրվում էր 15—20 օրից ոչ ավելի, վերադարձի համար թողնելով ավելի շատ ժամանակ, օրական անցնելով 30—35 կմ։ Միայն բացառիկ անհրաժեշտության դեպքերում ուրարտացիները կարող էին անցնել ամենայն արագությամբ օրական

---

23 С. К. Даль. Результаты изучения млекопитающих из раскопок урартского гор. Тейшебаини, Изв. АН АрмССР, 1952 г., № 1, стр. 81, его же Лошадь времен Урарту из раскопок Кармир-блура, Изв. АН АрмССР (естественные науки), 1947, № 10, стр. 58—59.

24 Б. Б. Пиотровский, Город бога Тейшебаини СА 1959, № 2, стр. 179.

25 Б. Б. Пиотровский, ук. соч., стр. 175.

մինչև 80 կմ։ Այդպիսի անցումների մասին հայտնի է ինչպես հնագույն աղբյուրներից, նույնպես և արդի պատերազմների փորձից։ Այսպես, Սարգոն II հայտնելով Սանգիբուտու մարզը նվաճելու մասին, գրում է. «Արցաբիայի և Իրտիայի միջև, բարձր լեռներով ես չափեցի 12 բերու, իսկ հետո ճամբար խփեցի»[26]։ Հետաքրքրական է նաև նշել, որ Սարգոն II զորքերը, երկար երթից հետո, հանկարծակի հարձակվում են ուրարտական Իրուսա թագավորի զորքերի վրա, գլխովին ջախջախում են նրանց և հետապնդելով նորից 6 բերու (40—45 կմ) տարածություն են անցնում (АВННУ, 125)։ Այս բոլորը հիմք են տալիս ենթադրելու, որ ուրարտացիները ևս կարող էին նման արագությամբ շարժվել։ Սակայն այդպիսի անցումներ, այն էլ բացառիկ դեպքերում, կարող է կատարել չափազանց լավ մարզված փոքրաթիվ հետևակը և հեծելազորը, որի կապակցությամբ վերջինիս նշանակությունը ավելի է մեծանում։ Մեր թվարկության 2-րդ և 1-ին հազարամյակների սահմանագծում սաղմնավորված հեծելազորը սկզբից մարտակառքերի համեմատությամբ գրավում էր երկրորդական տեղ և դրան համապատասխան պատկերվում է շարք գրված մարտակառքերի ետևում։ Սակայն, մեզ թվում է, սաղավարտների և այլ իրերի վրա պատկերված և սեպագիր արձանագրություններում մարտակառքերի հետագա ընդգծումը արդյունք է տրադիցիայի և կառավարների հասարակական դիրքի, որոնք ազնվականության ներկայացուցիչներն էին։ Սկսած 9-րդ դարի (մ. թ. ա.) վերջերից հեծելազորը մարտակառքերի համեմատությամբ ավելի ու ավելի մեծ նշանակություն է ստանում մարտական խնդիրներ լուծելու գործում։ Այսպես, հեթիթների և Ռամզես II միջև 1913 թ. ճակատամարտում հեթիթական բանակն ուներ 3500 մարտակառք և 20000 հետևակ։ Միանգամայն հասկանալի է, որ այդ ճակատամարտում հիմնական խնդիրը կատարում էին մարտակառքերը։

Դեպի Ումիա լիճը կատարած հիշյալ ռազմաերթի ժամանակ ուրարտական բանակն ուներ 9174 հեծելակ և 106 մարտակառք։ Այստեղ արդեն մարտական հիմնական խնդիրը կարող էր կատարել միայն հեծելազորը, իսկ մարտակառքերը լավագույն դեպքում կարող էին հարվածային ուժի դեր խաղալ՝ թշնամու շարքերը խախտելու համար։ Միանգամայն պարզ է, որ նման հարաբերության դեպքում հիմնական դերը խաղում էր հեծելազորը։ Մարտակառքերը, որոնք Ուրարտուի նախնական ժամանակաշրջանում զգալի դեր էին կատարում, աստիճանաբար իրենց նշանակությունը զիջում են շարունակ աճող հեծելազորին, որը հանդիսանում էր ուրարտական բանակի հիմնական տարրերից մեկը, շարունակելով իր նշանակությունը նաև Ուրարտուի ժառանգորդ Հայաստանի, հայկական պետականության բանակում։

---

26 Նշված 12 բերու տարածությունը Ի. Մ. Դյակոնովը համարում է 85—95 կմ, Ն. Ադոնցը՝ 65—70 կմ։